

ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐԻ ՔՈՉԱՐՅԱՆՑ

Ռազմական միջուկային գենքի գլխավոր կոնստրուկտոր, սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, Լենինյան և պետական մրցանակների դափնեկիր,
ԽՍՀՄ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ,
տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
(ժմնյան 100-ամյակի առթիվ)

Սամվել Գրիգորի Քոչարյանցը ծնվել է 1909թ. հունվարի 7-ին Նոր Բայազետ քաղաքում: Արտակարգ ընդունակությունների տեր երիտասարդը եղբոր՝ Սոսի հետ բարձր առաջադիմությամբ ավարտելով տեղի դպրոցը, ընդունվել է Երևանի Փիզմար ֆակուլտետ: Սակայն, կիսատ քողելով ուսումը՝ նրանք մեկնել են Մոսկվա և ընդունվել Եներգետիկայի ինստիտուտ: Մեկ տարի հետո, ելնելով ընտանեկան պայմաններից, եղբայրը վերադարձել է Երևան, իսկ Սամվելը շարունակել է ուսումը: Ինստիտուտն ավարտելով՝ Ս. Քոչարյանցն ընդունվել է ասպիրանտուրա: Երեսուն տարին չլրացած՝ արդեն գիտությունների դոկտոր էր: 37 տարեկան հասակում նա Մոսկվայի Եներգետիկայի ինստիտուտում ամրինի վարիչ էր, ֆակուլտետի դեկան: Այնուհետև, ի. Ստալինի ցուցումով, նրան տեղափոխել են խիստ գաղտնի քաղաք՝ «Արգամաս-16», որտեղ նա աշխատել է անընդմեջ 47 տարի: Ակգրում կոնստրուկտորական սեկտորի վարիչն էր, ապա փորձարարական ֆիզիկայի համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի գլխավոր կոնստրուկտորը: Նա դարձավ ատոմային և ջրածնային գեների գլխավոր կոնստրուկտորը: Գլխավոր կոնստրուկտոր Ս. Քոչարյանցը գենքի ստեղծման ասպարեզում աշխատել է ոչ միայն իր գործընկերներ Կուրչատովի, Սախարովի, Խարիտոնի, Ալիխանովի, Պավլովսկու և շատերի, այլև Կորուսովի, Յագելի, Պիլյուգինի հետ, որոնց հրթիռային «սարքերի» վրա նա տեղադրում էր իր «միջուկայինները»: Դրանով իսկ նա յուրօրինակ կամուրջ էր միջուկային բնագավառի ֆիզիկոսների և հրթիռների նախագծողների միջև:

Գործընկերների փոքր խմբի հետ միասին Քոչարյանցը առաջինն է ստեղծել խորհրդային երկրի «հրթիռամիջուկային» վահանակը: Այն ընդգրկում էր միջուկային հզոր «արտադրությունը» և միջնայրցանաքային հրթիռները: Ս. Քոչարյանցը գաղտնեգրված գիտնական էր և զբաղվում էր խիստ գաղտնի մշակումներով: Նա լավ հայտնի էր միջուկային և հրթիռային տեխնիկայով զբաղվող գիտնականների միայն ներ շրջանակի: Նրա ճամանակակիցները անհաջող էին միջուկային բնագավառի ֆիզիկոսների և հրթիռների նախագծողների միջև:

Ս. Քոչարյանցը երկար տարիներ ինստիտուտի և համապատասխան նախարարության գիտական խորհուրդների անդամ էր, դրկտորական, թեկնածուական ատենախոսությունների պաշտպանության հատուկ մասնագիտական գիտական խորհրդի նախագահ: Ա. Սախարովի մասին Քոչարյանցը ասել է՝ «Անդեյ Սախարովը հանճարեղ ֆիզիկոս էր, բայց, ափսոս, որ երկրորդ ամուսնությունից հետո ամբողջությամբ տարվեց քաղաքականությամբ»: Սախարովից հետո Քոչարյանցի հետ աշխատող հիմնական ֆիզիկոսը ակադեմիկոս Պավլովսկին էր:

1993թ. գարնանը «Արգամաս-16-ը» կորցրեց Ալեքսանդր Պավլովսկուն: Նույն 1993թ. ամռանը, օգոստոսի 14-ին «Արգամաս-16-ը» կորցրեց Սամվել Քոչարյանցին: Ոչ Պավլովսկին և ոչ Քոչարյանցը չեն ունեցել նախորդներ: Սակայն գենքի

ստեղծման հետ կապված միջուկային ֆիզիկայում նրանք բարձրացան այդ գործի ամենավերին գագաթը և իրենք էլ դարձան գիտության հսկաներ:

Երբ Քոչարյանցին հարցրել են, թե ավելի քան քառասունինգ տարի նա աշխատում է միջուկային գենքի ստեղծման ասպարեզում, նրա մտքով երբեք անցե՞լ է, որ այն կարող է կիրառվել: «Ո՞չ, երբե՞ք,- պատասխանել է նա, - մենք հստակ գիտակցում ենք, որ դա զայտելու և սանձահարման գենք է: Այն, ինչ տեսնում էի ուզմական փորձարկումների ժամանակ, ցույց էր տալիս, որ միջուկային գենքը չի կարելի և նույնական անհնար է կիրառել»: Այո, այլևս չկա 20-րդ դարի մեծանուն գիտնականներից ու կոնստրուկտորներից մեկը՝ Սամվել Գրիգորի Քոչարյանցը: Այդ գիտեին Ֆիզիկոսները և իրթիռագործները: Նրան լավ գիտեին մեր նախկին պետության ամենաբարձր ղեկավարները, որոնք հատուկ ուշադրությամբ տարբեր առիթներով նշել են նրա ծառայությունները: Սակայն հաստ ու կենտ մարդիկ գիտեին նրա խոհերի, առօրյայի մասին: Նրա անձնագրում նշված էր Մոսկվայի քաղաքացի լինելը: Սակայն մտացածին էր անգամ նրա հասցեն, իրականուն գոյություն չունեին ո՞չ փողոցը և ոչ էլ նշված տունը: Անձնագրում կար հատուկ նշան, որով նիլիցիայի յուրաքանչյուր բաժանմունք անձնագրի տիրոջը պարտավոր էր ցույց տալ օգնություն և մեծ հարգանք:

Սամվել Քոչարյանցը մեծ հայրենասեր էր, ծննդավայրից հեռանալը չէր նվազեցրել նրա սերը Հայաստանի նկատմամբ, իր զգացմունքներով նա միշտ հայրենիքի հետ էր: Ստեղծելով ատոմային- ջրածնային ռազմանթերքի տարբեր հզորություններ, նա միշտ այն կարծիքին էր, որ գենքի տեսակների ստեղծումով խաղաղություն է ապահովում նաև Հայաստանի համար: Նա ամենայն ուշադրությամբ էր հետևում Պարաբաղյան դեպքերին, մշտական ապրումների մեջ էր, այդ առիթով ասել է. «Ավելի ծանր է, երբ ապրում ես հարազատներից, սեփական ժողովից հեռու»:

Յայ ժողովուրդը քիչ է լսել իր որդու մեծագույն սխրանքի մասին: Գավառ քարքում 1987թ. կանգնեցվել է Քոչարյանցի կիսանդրին: Բայազենցիները հպարտանում են իրենց մեծ զավակով: Յայ գիտնականներից միայն երեքն են արժանացել սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոսի կոչման՝ Սամվել Քոչարյանցը, Վիկտոր Համբարձումյանը և Արտեմ Միկոյանը: Սակայն Քոչարյանցը միակն էր Խորհրդային Միությունում, որ վեց անգամ արժանացել է երկրի մրցանակների ամենաբարձր դափնենշաններին և կառավարական ամենաբարձր յոթ շքանշանի: Դրանք արտացոլում են մարդու մեծ կարողությունների ներդրումը երկրի գիտական ներուժի մեջ:

Սուտ կես դար «Արգամաս-16-ի» միջուկային, ջերմամիջուկային գենքի գլխավոր կոնստրուկտորը իր հետևողմների հետ ստեղծել է իրթիռամիջուկային գենքի համակարգեր, իսկ վերջին տարիներին նա Ռուսաստանի Դաշնության միջուկային կենտրոնի գլխավոր կոնստրուկտորն էր: Սակայն Ռուսաստանի և Հայաստանի մեծ զավակը կյանքից հեռացավ՝ լայն հասարակության համար մնալով «գաղտնի»: Ժողովրդական առաջնային առաջնային գաղտնի պարտեզը մի դրախտ է, որտեղից ոչ ոք, անգամ աստված, քեզ չի կարող արտաքսել»: Այդպես էլ Քոչարյանց մեծությունը կա և կմնա իր գործերով:

Պրոֆեսոր Ա. Ա. ՄԻՍՈՆՅԱՆ